Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 18-ի N 984 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՎԱՐՁԻ ՈՒ ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մասնակիցների գիշերավարձի օրական չափերը հաստատել մեկ մասնակցի (մարզիկ, մրցավար, բժիշկ, ներկայացուցիչ, ուղեկցող՝ հաշմանդամություն ունեցող մարզիկի դեպքում) համար՝ մինչև 6800 դրամ՝ ծախսերը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մասնակիցների սննդի ընդունման օրական վճարի չափերը հաստատել մեկ մասնակցի (մարզիկ, մրցավար, բժիշկ, ներկայացուցիչ, ուղեկցող՝ հաշմանդամություն ունեցող մարզիկի դեպքում) համար 3000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 18-ի N 984 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻ ԵՎ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների մրցանակակիրների դրամական պարգևատրման չափեր հաստատել.

1) ըստ անհատական հաշվարկի՝

(ՀՀ դրամ)

| NN | *Պարգևատրվողներ* | *1-ին տեղ* | *2-րդ տեղ* | *3-րդ տեղ* |
|---|---|---|---|---|
| *Համայնքային փուլի միջոցառում* | | | | |
| 1. | Մրցանակակիր | 7000 | 6000 | 5000 |
| *Մարզային փուլի միջոցառում* | | | | |
| 2. | Մրցանակակիր | 12000 | 10000 | 8000 |
| *Հանրապետական փուլի միջոցառում* | | | | |
| 3. | Մրցանակակիր | 45000 | 35000 | 25000 |

2) ըստ թիմային հաշվարկի՝

(ՀՀ դրամ)

| NN | *Պարգևատրվողներ* | *1-ին տեղ* | *2-րդ տեղ* | *3-րդ տեղ* |
|---|---|---|---|---|
| *Համայնքային փուլի միջոցառում* | | | | |
| 1. | Մրցանակակիր թիմ, ընտանիք (հայր, մայր, երեխա) կամ մարզական զանգվածային միջոցառման մասնակից իրավաբանական անձ | մինչև 70000 | մինչև 60000 | մինչև 50000 |
| *Մարզային փուլի միջոցառում* | | | | |
| 2. | Մրցանակակիր թիմ, ընտանիք (հայր, մայր, երեխա) կամ մարզական զանգվածային միջոցառման մասնակից իրավաբանական անձ | մինչև 120000 | մինչև 100000 | մինչև 80000 |
| *Հանրապետական փուլի միջոցառում* | | | | |
| 3. | Մրցանակակիր թիմ, ընտանիք (հայր, մայր, երեխա) կամ մարզական զանգվածային միջոցառման մասնակից իրավաբանական անձ | մինչև 450000 | մինչև 350000 | մինչև 250000: |

2. Հայաստանի Հանրապետության տարածքում պետական բյուջեի միջոցներով կազմակերպվող և անցկացվող մարզական զանգվածային միջոցառումների

հանրապետական փուլի մրցավարների դրամական պարգևատրման չափեր հաստատել՝

մեկ մրցավարի համար մինչև 20000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ